1. ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ Հիմնական հասկացություններ

1. **Օֆերտա**՝ դրանում նախատեսված պայմաններին համապատասխան «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ ՖԳԻԱՍ-ների միջոցով վճաահաշվարկային ծառայությունների մատուցելուհրապարակային առաջարկ՝ հասցեագրված ցանկացած անձի, որը չի պահանջում ընդունում անձի կողմից ստորագրություն դնելու եղանակով:

2. **Ակցեպտ**՝ հաճախորդի կողմից Օֆերտայի ամբողջական ծավալով և անվերապահ ընդունում՝ Օֆերտայով նախատեսված համապատասխան գործողությունների իրականացման միջոցով:

3. Ծառայություն մատուցող՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ հետ կնքել է պայմանագիր՝ իր կողմից մատուցվող ծառայությունների, վաճառվող ապրանքների, կատարվող աշխատանքների և/կամ քաղաքացիաիրավական այլ գործարքի դիմաց իր հաճախորդներից վճարումները ընդունելու և որպես շահառու իրեն փոխանցելու մասին:

4. Հաճախորդ՝ ՀՀ ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ով սույն պայմանագրի պայմաններին համաձայն՝ ՖԳԻԱՍ-ի միջոցով «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ-ից ստանում է վճարահաշվարկային ծառայություններ:

5. Վճարում՝ ՖԳԻԱՍ-ի միջոցով Հաճախորդի կողմից հօգուտ Ծառայություն մատուցողի դրամական փոխանցման գործարքի իրականացում, կամ Հաճախորդին կատարված դրամական փոխանցման ստացում Հաճախորդի կողմից՝ դրամական միջոցները կանխիկացնելու միջոցով:

6. **Վճար**՝ ծառայություններ մատուցող(ներ)ի օգտին կատարվող վճար կամ Հաճախորդին կատարված դրամական փոխանցման ստացում՝ դրամական միջոցները կանխիկացնելու միջոցով՝ մատուցված ծառայությունների դիմաց:

7. **ՖԳԻԱՍ**՝ Ֆինանսական գործարքներ իրականացնող ավտոմատ սարք, որի միջոցով ընդունվում են կատարված վճարները:

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հանդիսանում է հրապարակային օֆերտա (այսուհետ՝ Օֆերտա)՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի:

2.2. Օֆերտան արտահայտում է ՖԳԻԱՍ-ների միջոցով սույն Պայմանագրում նշված պայմաններով վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ-ի կամքը և պարունակում է Պայմանագրի բոլոր էական պայմանները:

2.3. Մինչև ՖԳԻԱՍ-ի միջոցով Վճարում կատարելը՝ Հաճախորդին.

2.3.1. ընձեռվում է վճարման հնարավորություն՝ հօգուտ այն ծառայություններ մատացողների, որոնք ներկայացված են ՖԳԻԱՍ-ի մոնիտորին, կամ Հաճախորդին փոխանցված դրամական միջոցների կանխիկացում իրականացնելու հնարավորություն,

2.3.2. տրամադրվում է ՖԳԻԱՍ-ից օգտվելու պարզ և մատչելի ուղեցույց,

2.3.3. ապահովվում է բաժանորդների հաշիվների մասին անհրաժեշտ լիարժեք տեղեկատվություն (ոչ բոլոր Ծառայություններ մատուցողների վերաբերյալ)՝ հօգուտ Ծառայություն մատուցողների վճարում իրականացնելու դեպքում,

2.3.4. տրամադրվում է կատարված Վճարման (գործարքի) փաստաթղթային հաստատում՝ անդորրագիր,

2.3.5. կարող է տրամադրվել աջակցություն ՖԳԻԱՍ-ից օգտվելու, կատարված սխալ գործողությունները շտկելու հարցում՝ ըստ Հաճախորդի ցանկության,

2.3.6. տրամադրվում է տեղեկատվություն միջնորդավճարների չափի մասին ՖԳԻԱՍ-ում նշված է յուրաքանչյուր Վճարման համար:

3. Հաճախորդի գործողությունները

3.1. Հաճախորդը լիարժեք և անվերապահ ընդունում է «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ-ի հրապարակային առաջարկը՝ ՖԳԻԱՍ-ի միջոցով Վճարում կատարելու ուղղությամբ անհրաժեշտ գործողությունների կատարմամբ: ՖԳԻԱՍ-ի միջոցով Վճարում կատարելու յուրաքանչյուր փաստ առանձին գործարք է, որն իրականցվում է Օֆերտայում նշված պայմանների համաձայն:

3.2. Հաճախորդը պարտավոր է ուսումնասիրել և հետևել ՖԳԻԱՍ-ի մոնիտորին արտացոլվող գործողությունների ուղեցույցին:

3.3. Հաճախորդի կողմից ուղեցույցում չնախատեսված գործողություններ կատարելը կարող է դառնալ Վճարումը չընդունելու հիմք:

3.4. Հաճախորդն իրավունք ունի զանգահարել «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ՝ +374 (60) 80 22 22 հեռախոսահամարով և ստանալ Վճարումը կատարելու համար անհրաժեշտ պարզաբանումները, տեղեկատվությունը:

3.5. Հաճախորդը պարտավոր է պահպանել Վճարման դիմաց տրամադրված անդորրագիրը հետագա պարզաբանումներ ստանալու անհրաժեշտություն առաջանելու դեպքում:

4. Ծառայությունների արժեքը

4.1. Ծառայությունների արժեքը սահմանվում է «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ-ն՝ Վճարի տոկոսային հարաբերակցությամբ և (կամ) ֆիքսված գումարի չափով, որի մասին Հաճախորդը տեղեկանում է ՖԳԻԱՍ-ի միջոցով՝ ՖԳԻԱՍ-ից օգտվելիս, նախքան Վճարման մասին նրա որոշում ընդունելն ու համապատասխան գործողությամբ հաստատելը:

4.2. Ծառայությունների կատարման և վճարման փաստը հաստատվում է վճարման վերաբերյալ տրամադրված անդորրագրով:

5. Հատուկ պայմաններ

5.1. «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲ Ը-ն իրավունք ունի ժամանակավորապես դադարեցնել իր կողմից մատուցվող ծառայությունները:

5.2. «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ-ն պատասխանատվություն չի կրում ոչ իր մեղքով առաջացած՝ Հաճախորդի վնասի համար: «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ-ն պատասխանատվություն չի կրում ծառայությունների մատուցման լրիվ կամ մասնակի ընդհատումների համար, որոնք առնչվում են սարքավորումների կամ ծրագրային ապահովման փոխարինմանը կամ այլ աշխատանքներին՝ ծրագրերի կամ սարքավորումների աշխատունակության պահպանման կամ արդիականացման նպատակով:

5.3. Հաճախորդն իրավունք ունի Վճարումից (գործարքից) բխող դիմում-բողոքները ներկայացնել «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ-ին, ինչպես նաև Ֆինանսական համակարգի հաշտարարին: Պահանջն ընդունելու, քննելու և որոշում կայացնելու կապակցությամբ ֆինանսական համակարգի հաշտարարը հաճախորդից որևէ վճար չի գանձում: Մանրամասն տեղեկատվությունը բերված է վեճերի լուծման բացատրական ամփոփագրում, որին կարող եք ծանոթանալ «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքում՝ www.finbox.am:

5.4. «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ-ն ֆինանսական համակարգի հաշտարարի հետ չի կնքել վերջինիս որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր:

5.5. «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ-ն իրավասու է Հաճախորդի կողմից ներկայացված դիմում-բողոքների քննությանը ներգրավել նաև իր հետ համագործակցող ֆինանասական կազմակերպություններին, ովքեր մասնակցել են Հաճախորդին վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու գործընթացին:

5.6. «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ-ն կարող է փոփոխել Օֆերտայի պայմանները, որոնք ներկայացվում են ի գիտություն Հաճախորդին՝ մինչև Վճարում կատարելու պահը:

5.7. Հաճախորդը «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ-ին իրավունք է վերապահում Վճարների և «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ-ի մատուցած ծառայությունների վերաբերյալ իր բջջային հեռախոսահամարին ուղարկել համապատասխան SMS հաղորդագրություն:

5.8. Սույն Օֆերտան ընդունելով՝ Հաճախորդը տալիս է անվերապահ համաձայնություն առ այն, որ «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ-ն (հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց պող. 2) կարող է երրորդ անձանցից ստանալ Հաճախորդի վերաբերյալ տեղական և ինքնակառավարման մարմիններին պատկանող տվյալների բազաներում պահպանվող ցանկացած անձնական տվյալ և մշակել այն՝ Հաճախորդի կողմից խնդրարկվող գործարքը կատարելու համար: Հաճախորդն ի գիտություն է ընդունում, որ անձնական տվյալների մշակումը իրականացվում է ծառայությունների մատուցման ընթացքում և դրանից հետո, անձնական տվյալները պահպանվելու են և կարող են փոխանցվել երրորդ անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

5.9. Հաճախորդը ցանկացած պահի կարող է պահանջել կատարել հարցված անձնական տվյալների ուղղում, ոչնչացում, տվյալների մշակման դադարեցում, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

5.10. Սույն պայմանագրի՝ այլ լեզուներով ներկայացված տարբերակների (դրանց առկայության դեպքում) և հայերեն տարբերակի միջև անհամապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

6. «ՖԻՆԲՈՔՍ» ՓԲԸ վավերապայմանները

Անվանումը՝ «ՖԻՆԲՈՔՍ» փակ բաժնետիրական ընկերություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց պողոտա 2
Հարկային հաշվեհամար՝ 02901311
Վեբ կայք՝ www.finbox.am
Էլ. հասցե՝ info@finbox.am
Հեռախոս՝ +374 (60) 80 22 22